ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2026 թվականի N 1695-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1036-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1704-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետություն ժամանող պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մասին» N 1036-Ն որոշման 2-րդ կետը «պաշտոնատար անձանց» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերի, խորհուրդների, հանձնաժողովների անդամների» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի «Ավիատոմսերի ձեռքբերման պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության

2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 982-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1704-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով՝

«2.1. Սույն որոշման գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանած պաշտոնատար անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերի, խորհուրդների, հանձնաժողովների անդամների այցերի հետ կապված ծախսերի փոխհատուցման վրա:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ